

ԼԵԶՈՒԱԽՈՍԱԿԱՆ

ԲԱՆԱԿԱՐԱՎԱՆ ՄԸՆԻՌՈՒՔ*

1. Ամսալ :

Անսալ բայց ստուգաբանուած չէ : Այդ բառը նշանակում է լսել, ականջ դնել . եւ տրուելիք է իր բան-ալ . Հետեւապէս իր արմատն է անս : Այս արմատը սակաւածին է . անսալ-ը միակ բառն է կարծեմ, որ աճած է այդ արմատի շնորհիւ :

Անս արմատը ես կը ուղարկ եմ լատ . առա (*Փր. anse*) բառի հետ, որ նշանակում է ամանների ականջաձեւ բոնելիք : Դրան մեր ժողովուրդն ասում է ունդ կամ ունկ : Սրանք մեր հին «ունկն» բառն են, որ նշանակում է ականջ : Ունկն բառը ականջ իմաստով չքացած է մեր բարբառներում, բայց մտածութեան այն ընթացքը, որ ամանների բոնելիքը համարած է նրանց ունկը, այսինքն ականջը՝ մնացած է ժողովուրդի մէջ : Կամուջի երկու ծայրերին ժողովուրդն ասում է «կամուրջի ականջ» . ինչպէս կաթուան բոնում են երկու ունկերից, այսինքն ականջներից եւ վեր են առնում, այնպէս էլ կամուրջը կախուած է իր երկու ականջներից, այսինքն՝ ունկերից :

Որ ունգ եւ ունկ բառերը մեր հին ունկն բառն են՝ երեւում է նրանց յոդնակի ձեւից, ո՞ւ է ընզներ, ընկներ, նշանակում է նրանց եղակին եղած է ունգի և ունկին : Գալով գ եւ կ հնչւաններին՝ նրանք լծորդ են, այսպէս խորսրանկ — խորամանգ, երկինք — երգինք (գաւառական արտասանութեամբ) :

Այսպէս ուրեմն ունգ եւ ունկ նշանակում են ականջ, ունկն, լատ . առա, Հետեւապէս անսալ՝ նշանակում է ականջել, ունկել : (Ականջել բայն իր նորաբանութիւն կարելի է հանդիպել Շանթի «Հին Աստուածների մէջ») :

Հայի մտածութեան ընթացքով է գնում եւ յոյնի մտածումը, օնչ որի սեռականն է ածոց նշանակում է թէ ականջ և թէ ամանի ունկ, ծերուած է երկու ականջաձեւ ունկ ունեցող, երկականջ, երկունկն :

Միւս կողմից լսել եւ ականջ բառերը արմատակից են . յուն . օւա — լսել եւ օնչ ականջ նոյն ենթաղբական արմատն ունին,

* Խիզակս այս «Մանրուքը կը հրատարակենք վերապահութեամբ» : Խմբ . «Հանդ, Ամսոնի :

որ է՝ 'AF.¹ իսկ լատ . audire բայլ, որ նշանակում է լսել համարում է ծագած արի — ականջ բառից² Մտածութեան նոյն ընթացքով անս արմատը, որ ըմբռնուած է իր ունկն եւ ականջ՝ տուած է անսալ բայլ, որ է լսել : Թէ հին լատինացին եւ թէ հին հայը լսելու գործողութիւնն ըմբռնած են իր ականջել, ունկել (թող ներուի մեզ վերջին բարբարոս բառը) :

Անս արմատը փոխառութիւնն է թէ բնիկ՝ չեմ կարող ասել . պէտք եղած գրքերը չունիմ այս մասին կարծիք յայտնելու համար : Հմուտներին կը մնայ այս կէտը պարզել :

2. Բիւր :

«Հազար եւ բիւր իրանական են» դրում է Ա. Մէյէ (Gram., էջ 73) : «Քանի հազարը ակնայտնի կերպով իրանական է, բիւր բառը նոյնպէս պէտք է եկած լինի իրանականից» դրում է մի ուրիշ տեղ (Rev. d. ét. Arm., հատ . IV, պլ . 1, էջ 110) : Ն . Մառ այդ բառի հին արտասանութիւնը համարում է բեւր, հիմնուելով նոյն բառի հին վրացական տառաղարձութեան վրայ, որ է ծօթու — բեւրի — այսինքն՝ շատ, բազում (Gramm. dr. arm. յօ, էջ 21) :

Ես կարծում եմ բառն իսկապէս իրանական է եւ իր բուն նշանակութիւնն է անհամար :

Ահաւասիկ հիմքերս :

1. Յայտնի է, որ եը յաճախ արդիւնք է ի եւ ա ձայնաւորների ձուլման . այսպէս բարի-ա-կամ > բարեկամ, հետեւապէս՝ իս-ե :

Չուլման այս երեւոյթը նախազրական է, քանի որ բարեկամը ոսկեղարեան բառ է . այս հիման վրայ բեւր բառը կարելի է վերակազմել իրը * բիւր :

2. * Բիւրը բնական է, որ արտասանուած է իրը * բիւրը . այսինքն ւր զուգածայնի մէջ մի թմրած ձայնաւոր կայ, որ ը է դարձած :

Կարծում եմ այդ ձայնաւորն ա է : Այս հաշուով * բիւրը ձեւը կարող է վերականգուել իրը * բիւրը, ուր չեշար վերջընթեր վանկի վրայ լինելով՝ վերջին վանկի ձայնաւորը պիտի օրինապէս սղէր եւ դառնար

¹ Տես M. A. Bailly, Dict. Grec-français, Արմանակը ցանկը, էջ 2202 :

² Տես L. Cledat, Diet. etymologique de la langue française, ճե բառը, էջ 182, 10 դ . տպ :

ը, որ Ս. Մաշտոց չհրահանգեց դրել: Այսպիսով *բիա՛ւար պիտի դառնար *բիա՛ւր, իսկ սա բիւր:

Յ. Երկու ձայնաւորների միջև երեւցող ւը յաճախ մ է. այսպէս մրջիմն — մրջիւն (արտասանիր մրջիւն), պաշտա՛ման > պաշտա՛ւան > *պաշտա՛ւըն > պաշտա՛ւն Այս հիման վրայ *բիա՛ւար կարելի է վերականգնել իրը *բիա՛մար:

Արդ՝ բի պարսկ. ժխտական մասնիկն է իսկ *ամար, մեր համար (հաշիւ) բառն է մերկացած, այսինքն՝ ի կորցրած: Հե կորուստը սովորական է օր. համար (վասն) եւ ամա (թիֆլիս). Սայաթ-Նովան դրում է: Աշխարհում ախ չիմքաշի քանի վուր եար իս ինձ ամա

այսինքն՝ ինձ համար: Հի անկումը նախագրական երեւոյթ է. այսպէս՝ երկերիւր, որ Ա. Մէյէ իրաւամբ վերականգնում իրեւ *իրկի(h)արիւր (Gram., էջ 73): Համար — ամար (հաշիւ) բառին կշռում է ողբս, մամար — շումար — բառը, իսկ բեւր բառի նախաւոր *բիամար ձեւին կշռում է ողբս. մամար — բիշումար բառը, որ նշանակում է անհամար, ան-հաշիւ եւ թէ՝ կազմով թէ իմաստով նոյնանում է մեր *բիաւար > բեւր > բիւր բառին: Բիւր բառի նշանակութիւնն իրը տաս հազար՝ յետագայ իմաստաբանական զարգացման արդիւնք է:

Այսպիսով բիւր բառի հոլովոյթն ստանում է հետեւեալ կերպարանքը. *բիա՛մար > *բիա՛ւար > *բիա՛ւր > բե՛ւր > բիւր: Հասկանալի է, որ հոլովոյթի այս փուլերը ցուցագրական արժէք ունին եւ ոչ ճշիւ ժամանակագրական:

Նոյն կազմութիւնն ունի անշուշտ եւ հարիւր բառը, որի ստուգաբանութիւնը յայտնի չէ:

Նա եւս վերականգնելի է հետեւեալ յետագարձ փուլերով հարիւր < հարե՛ւր > *հարիւր < *հարիա՛ւար < *հարիա՛մար: Մենք ստացանք *հարի եւ *ամար, որ է համար: Ի՞նչ է *հարի: Անշուշտ սա մեր լեզուական ընտանիքի նոյնիմաստ արժատների համարժէքն է, մն. գատա-մ, յուն. է-շատ-ն, զնէտ. սատօմ, լատ. cent-um, դոթ. hund այլն: (K. BRUGMANN, Gram. Comp., 162 եւ այլուր): Ի՞նչ են նշանակում իրօք չատ, կատ, սատ եւ այլ արմատները — յայտնի չէ: Այդ հաշուի մէջ կը մտնի եւ մեր *հարի-ն:

Յետագայ որոնողը պէտք է հետամուս լինի գտնելու այն հնչարանական օրէնքները, որոնց հիման վրայ ենթագրական նախաւոր չկյուտո-մ ձեւից ծագած է *հարի ենթադրական բաղադրիչը մեր հարիւր բառի (BRUGMANN., էջ 129): Առ այժմ ես հնար չունիմ այդ հոլովոյթը ցուցագրելու: Յամենայն դէպս հարիւրն իրը նախաւոր *հարիւաւար կարծում եմ ճիշտ վերլուծութիւն է, եթէ բիւր բառին տուած մեկնութիւնս ճիշտ համարուի:

Յ. գան ըմպել, ծեծ ուտել:

Զարմանալի չէ որ մեր նախահայերը ծեծը (զան) խմում էին, իսկ մենք ուտում ենք: Ի՞նչն է սրա պատճառը: Պատճառն այն է, որ այդ ոճը հայերէն չէ այլ փոխառութիւն է մեր հարեւան իրանից, ինչպէս «փող հարկանել» ոճը, որ պահաւական փոխառութիւն է եւ ոչ հայի մտածում (տես. A. MEILLET, Gram. XV): Հայն այսօր ասում է «փող փչել», «զուռոնա վիչել» եւ մեր խելքին մօտ է, որովհետեւ փողը փչելու գործիք է:

Պարսիկն այսօր ասում է ճոճահայութ՝ խործ — ապատկ ուտել, որ անշուշտ հին ոճ է: Ճոճահայութը խործ բառը թէ՛ ուտել է նշանակում թէ՛ խմել: — Հաց ուտել, ճոճ խործ — ջուր խմել: Հին հայը ճոճ խործ առած է խմել իմաստով եւ ասած է «գան լմպել», իսկ նոր հայը — չպիտեմ ո՞ր տեղից՝ նոյն բառն առած է ուտել իմաստով եւ ասած է «ծեծ ուտել»:

Ահա թէ ինչու հները ծեծը խմում էին, իսկ նորերն ուտում են:

Յ. զոյգ եւ կենտ:

Ի՞նչ է զոյգ եւ ի՞նչ է կենտ: Վերջին բառը չկայ Առձեռն բառզբքի մէջ. ես տառապարձում եմ կենտ եւ ոչ կենտ: Այն բարբառներում, ուր ե-ը լաւ արտասանում են իրը յե — չեմ լսած կայտ արտասանութիւն, այլ մաքուր է — կենտ:

Կարծում եմ զոյգը այն տեսակ բառ է ինչպէս զարբուն, զարմանել եւ այլն, որ ունինք նաեւ առանց զ-ի արբուն, արմանել: Այս հիման վրայ զոյգ նոյն է ոյգի ։ իսկ ոյգ նշանակում է ոտք որ երկու հատ են:

Կենտ ենթագրում է մի նախաւոր ձեւ — *կայնտ. նկատելով որ ք եւ կ լծորդ են:

1. Խնդիր չկայ թէ թուբերէնէ, հմնուէ կայ. Խնդիր. «Հանդ. Ամս. ո՞ի».

ծասկել—ծասքել, պասկել—պասքել, քար—կառ, կար—կառ եւ այլն > ենթադրելի է նաև քայնը ձեւը, որ հայերէն բառ է եւ զօկերի (Գողթան) բարբառով նշանակում է ֆիք, որ ինչպէս գիտէք մի հատ է: Քայնթից է ֆինք բառը արեւելեան բարբառներում եւ Ղարաբաղցոց ֆէնքը, որ մէր կէնտի ձեւն ունի արդէն՝ այլ դարձնելով է:

Այսպիսով զոյդ նշանակում է ոտքեր, իսկ կէնք — ֆիք. եւ հարցնել խաղի ժամանակ «զոյդ թէ կէնտ»՝ միեւնոյն է թէ ասել, «ո՞տք թէ քիթ» այսինքն երկու թէ մէկ:

5. քօն եւ իր ընտանիքը:

Թօն նշանակում է թացութիւն, թաթաւ, գրում է Առձեռնը. քօնընկէցք — շատ անձերեւ. քօնուտ — անձրեւոտ, խիստ թաց: Արեւելեան բարբառներում քօն պարզապէս նշանակում է անձեւ: Ժողովրդական երգն ասում է.

Ամբել ա քօն չի գալիս,
Մքնել ա տուն չի գալիս.

ուր քօն անձեւ է նշանակում:

Թօն — նոյն է թէ քաւն: Այս բառի ւր ժողովուրդն իրը յզգալով՝ ստեղծած է *քայն նախաձեւը, որից օրինապէս ծաղած է քէն բառը, որ չկայ Առձեռն բառզբքի մէջ: Թէն նշանակում է թաց: (Հմ. յաւոց > յօնց, եւ *այսոց > էտոց. երկուոն էլ նոյն գործիքի անուններն են: Նկատէք նաև անց. անկ. եզ. Յրդ գէմքը *նառէյր > նառէք, եւ *նառէւր > նառիւր, ուր ւ = յ: Ինչպէս տեսնում էք ւ եւ յ այս փոխանակումը հին երեւոյթ է. «ի մէջ արանց իմաստնոց եւ հրմտագունթից բան ճառիւր» գրում է Խորենացին Ա, զ):

Թաւն բառի վեջին նն խմբի մէջ թմրած է մի ճայնաւոր եւ բառն անշուշտ երբեմն արտասանուել է իրը բաւըն: Այդ ճայնաւոր կարծում եմ ան է եղած եւ քաւն ամփոփումն է քաւնան ձեւի, որ չեշտն եղած է վերջնթեր վանկի վրայ, որի պատճառով վերջին վանկի ար սղած է եւ չքացած՝ աին տալով օի հնչում:

* Թա՛-ան ձեւը արուելի է իրը *քաւն եւ կազմութեամբ նման է խած-ան, վագ-ան, կծ-ան եւ այլ բառերին, որոնք նշանակում են խածող, կծող, վազող, կամ խած անող, վազ անող եւ այլն: Այս հաշուով *քաւն-ան պիտի նշանակէր *քաւն:

Ի՞նչ է *քաւն. նրա իմաստը կարելի է գուշակել իր կրկնաւոր ձեւից, որ եղած է *քաւն-ան էլ սրանից ծաղած է քարաւանը. իսկ սա նշանակում է թրջել, թաց անել, խխում անել: Ուրեմն *քաւն-ան > քաւն > քօն նշանակում է թաց անող թրջող:

Թաթաւ բառի մի տարրերակն է քարախն բառը, որից քարախն կամ քարախնել. նա ենթադրում է մի նախաւոր *քաւն-քախն կրկնաւոր ձեւ, որի բաղադրիչ տարրն է քախն, սա կըուում է քաւն ձեւին: Սրանից են կազմուած արնաքարախն, ցլաքարախն եւ նման բառերը: Թաթախն նշանակում է որ եւ է իր միաձել մի հեղուկի մէջ կամ տողորել մի հեղուկով: Այստեղ մենք գլունում ենք լս եւ ւի մի հետաքրքրական լծորդութիւն, որ իմ կարծիքով մեկից միւսին անցած է իմ միջոցով եւ այս երեւոյթի տարազն է ւ = հ = լ: Այս արտասովոր հաւասարութեան խնդիրը շատ խնդիր կը վերցնի, ուստի առժամապէս թողնում եմ բաց: Անվիճելի է սակայն որ քարաւ եւ քարախն թէ՛ իմաստի եւ թէ՛ կազմութեան տեսակէտով սերտ առընչութիւն ունին:

«Թաւան ձեւի ւր յետաղային տուած եկած մի հնչիւն եմ համարում: Ինչպէս պաշտաման բառը դարձած է *պաշտաւն > պաշտոն, այնպէս էլ *քաւնան > քօն բառի համար ենթադրելի է մի նախաւոր *քամ-ան ձեւ, ուր մը երկու ձայնաւորի միջեւ դարձած է ւ (Հմ. մըջի-մըն > մըջիւրն < մըջիւն):

Ուրեմն հնագոյն արմատն եղած է ոչ թէ քաւն, այլ քաւն: Նկատելով որ թէ մէր լեզուի եւ թէ հնդեւրոպական լեզուախմբի մէջ ընդհանուր օրէնք է և եւ մ ձայնաւորների լծորդութիւնը (BRUGMANN, Abregé de gram. comp.) ապա *թամ ձեւի հետ միասին ենթադրելի է քաւն ձեւը, որից՝ քաւն = քաց ուսելիք. Թանալք-բջիլ, թաց անել, թաթախնել: Այս ընտանիքին է պատկանում եւ քաց բառը, որ սակայն հաստատելու համար նախապէս շատ ընդարձակ պէտք է խօսել ց ձայնի էութեան մասին: Այս հարցը նոյնպէս թողնում եմ առկախ:

Նկատելով, որ քն լծորդ է տին (Հմ. տերեւ — որ ես բնիկ հայ բառ եմ կարծում եւ ոչ ասորական փոխառութիւն — եւ քեր-վարդի թեր, ծաղկի թեր, այսինքն վերթ) — քամ արմատի մի տարրերակը կ'ունենանք

* տամ ձեւով, որից տամ-ուկ, որ նշանակում է թաց եւ տամկութիւն — թացութիւն։ Տամուկ բառի կազմութեան համար համեմատիր քննուկ, քրտնուկ, որ հանդեպում ենք ժողովրդական երգի մէջ։

Դեռ քննուկ էր, քրտնուկ էր իմ եարը։

որ այդ բառերը նշանակում էր դեռ քնած էր, քրտնած էր իմ եարը։ Ուրեմն տամուկ — նշանակում է թաց եղած, թրջուած։

Թամ արմատի * թամ-ան ձեւի պէս տամ արմատն եւս պէտք է որ ունեցած լինի * տաման մի ձեւ, որ պիտի նշանակէր տամ անող, այսինքն թրջող, թաց անող։ Իսկ այդ * տաման ձեւը վերի կարգով պիտի դառնար * տաւան, որից վերջին ձայնաւորի սղումով — * տաւըն, իսկ սրանից — տաւն, որ է տօն։

Այսպիսով մեր տօն բառի նախաւոր իմաստն էր տամ անող, կամ որ նոյն է՝ թամ անող, այսինքն անձրեւ, թօն։

Տօն բառի այս հին իմաստը տարօրինակ չի թուայ եթէ նկատենք, որ լեզուն շատ հին երեւոյթ է, ամէնից յետամնաց վայրենի ցեղերն անդամ այսօր խօսել դիտեն։ Քաղաքակրթութեան երեք հին շրջաններում — որսորդական, հովուական եւ երկրագործական — անձրեւը միշտ խանդարած է մարդկանց աշխատանքը, բոնադատած է իր որջի, հիւղի կամ խրճիթի մէջ անդործ ու պարապ նոտել։ Այրաբնակ որսորդի աշխատանքը անձրեւին պէտք է ընդհատուէր, որովհետեւ թօն էր, տօն էր, այսինքն թամ անող կամ տամ անող էր դալիս վերից։ Մեր տօն բառի լատիներէն համարժէքը fērīae ընդհանրապէս նշանակում է աշխատանքի ընդհատում, հանդիսաւ, պարապ։ Երբ անձրեւ էր դալիս հին մարդը հարկադրաբար մնում էր անդործ, պարապ։ Երբ կեանքի զարգացման հետեւանքով կամովին ստեղծուեցան անդործութեան, աշխատանքի ընդհատման, պարապութեան օրեր, այսինքն տօներ — այս նոր երեւոյթը որակուեցաւ հին բառով, որ է տօն։ Թէ ինչո՞ւ տօն և ոչ թօն առ մի ինդիր է, որ գժուար է լուծել։ որովհետեւ զեռ հաստատպէս լուծուած չէ թէ արդեօք թ ձայնի մերկացումն է ան թէ տ ձայնի թաւացումն է թն։ Այսինքն թօն բառն է հնագոյն կերպարանքը տօն բառի թէ տօն բառը՝ թօն բառի։ Այս կարգի բառերի ցութիւնը հաստատել — արդէն նշանակում

է ստուգաբանել։ Մնացածը մի ինդիր է, որ ընդհանուր լեզուազիտութեան կը վերաբերի։

Այսպիսով ինչպէս տեսանք տօն եւ թօն նոյն բառի տարրեր ձեւերն են եւ երկուսն էլ նշանակում են անձրեւ։ Նրանք, որ համեմատական բառութեր ունին՝ կարող են որոնումներ կատարել այս ուղղութեամբ եւ աեսնել թէ արդեօք տօն նշանակող օտար բառերը որեւէ կապ ունին անձրեւի հետ։ Ես հնարաւորութիւն չունիմ այդ աշխատանքը կատարելու։

Ն. ԱՎԱՍԻԵԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐԻՉԵԱԼ ԿՈՐԻՒՆԻ ՅՈՒՐՁԼ

«Հանդէս Ամսօրեայ»ի մէջ, 1927, թիւ 9, պ. Ֆնտղլեան հաճել է պատասխան զրել մեր գիտուղութիւնների առթիւ, տպուածնոյն հանդէսում։

Պ. Ֆնտղլեան մի գիւտ է արել, Կորիւնի մի հասուածի մի նոր մեկնութիւն։ Որպէս ապացոյց, որ ինքը ճիշտ է հասկանում լիշեալ հատուածը, կոչ էր արել Փոքր-Կորիւնի եւ Արաթանդեղին, որ սրանք եւս իրեն իրեւ թէ համամիտ են։ Ահա՛ իր յարտարարութիւնը, «Փոքր-Կորիւն եւ Արաթանդեղ յանկարծահասով մահ չեն հասկանար»։

Արդ մենք ցոյց տուինք, որ այս կոչումը յանիրաւի է, ոչ Փոքր-Կորիւն եւ ոչ Արաթանդեղ պ. Ֆնտղլեանի գործին վկաներ չեն։ Կարծեմ, պարզ է ինդիրը։

Բայց տեսէ՞ք, ինչպէս է թիւրում հարցը պ. Ֆնտղլեան ասելով, որ մենք զբաղւում ենք կեղծ-Կորիւնով, փոխանակ հարտկատի, «իբր ուղիղը զերազանելով», ալ եւ ուղում ենք որպէս թէ «կեղծ-Կորիւնով ուղիղ հարազատր»։ Մտքի այս խոսորումը ներելի չէ ընաւին մինչեւ անդամ պ. Ֆրնտղլեանի նման բանակորին։ Հակառակորդին հասկանալը եւ իր ասածը լիշելը առաջին եւ տարրական պահանջն է ամէն մի վէճի, առանց որի վէճն իսկ դառնում է ժամավաճառութիւն։ Մրանով պ. Ֆնտղլեան կրկնակի մեղանչում է, զբաղարտելով նախ կեղծ-Կո-